Արձանագրություն N 2

<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/15>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար մանկական արվեստի դպրոցի շենքի կառուցման աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության անցկացման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Ծաղկաձոր 23 մայիս 2019թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
անդամներ՝ Վ.Հայրապետյան /ԲԱ /
Ն.Սիմոնյան /ԲԱ/
Ա.Մեսրոպյան /ԳԱ /
Ն.Խաչատրյան /ԳԱ/
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 26-րդ կետի 1-ին մասը՝ հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության պատճառով /գտնվում է հերթական արձակուրդում/ նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը:

1. **Տեղեկություններ <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/15>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

(Ն.Խաչատրյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի մայիսի 23-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. **<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/15>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

(Ն.Խաչատրյան)

Գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	<<Խոյանք>> ՍՊԸ
2	<<Համաշինանախագիծ>> ՍՊԸ
3	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ
4	ԱՁ Լարիսա Նալբանդյան

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ն.Խաչատրյան)

Ընդունել ի գիտություն, որ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են **<<Խոյանք>> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում առկա է անհամապատասխանություն՝ մասնակցի անվանում և երկրի անվանում տողերը լրացված չեն:

<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 4-ում (գնային առաջարկ) <<ընդհանուր գին>> սյունյակը լրացված չէ:

3.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Մերժել **<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

4. Նիստը կասեցնելու մասին

(Ն.Խաչատրյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել **<<Խոյանք>> ՍՊԸ** -ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019 թվականի մայիսի 27-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի

անդամներ՝ ----------Ն.Սիմոնյան

----------Ա.Մեսրոպյան

----------Ն.Խաչատրյան

----------Վ.Հայրապետյան

քարտուղար՝----------Ա.Ավետիսյան